# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.05.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**ՍՑ-ԳԲԽ-25/17**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-25/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2017թ. թիվ 03/73-3/5667-17 և 31.03.2017թ. թիվ 03/73-3/5735-17 գրություններով ներկայացված «Հելն պրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00159501) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-25/17 բողոք), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ քննչական կոմիտեի 23.03.2017թ. թիվ 08/18/2169-17 և ՀՀ դատախազության 30.03.2017թ. թիվ 44/10.1/2677-17 գրությունները և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

### 1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի 23.03.2017թ. թիվ 08/18/2169-17 և ՀՀ դատախազության 30.03.2017թ. թիվ 44/10.1/2677-17 գրությունների հիման վրա, 30.03.2017թ. թիվ 03/73-3/5667-17 և 31.03.2017թ. թիվ 03/73-3/5735-17 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Հելն պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու

հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

**2. «Հելն պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Կենտրոնը 04.04.2017թ. թիվ 02/04.1/1310-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Հելն պրինտ» ՍՊԸ-ին, սակայն կարծիք չի ստացվել:

**3. ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ քննչական կոմիտեն 23.03.2017թ. թիվ 08/18/2169-17 գրությունով ներկայացրել է «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

**4. ՀՀ դատախազության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ դատախազությունը 30.03.2017թ. թիվ 44/10.1/2677-17 գրությունով ներկայացրել է «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

**5. ՍՑ-ԳԲԽ-25/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2017թ. թիվ 03/73-3/5667-17 և 31.03.2017թ. թիվ 03/73-3/5735-17 գրություններով ներկայացված «Հելն պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ***ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգ***

1. «Հելն պրինտ» ՍՊԸ-ն ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 22.02.2017թ. հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

2. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 01.03.2017թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 06.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Հելն պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(22.02.2017թ.)*** երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է 7-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2017թ. նիստի N 6 արձանագրության համաձայն՝ «Հելն պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

## 2. *ՀՀ դատախազության կողմից կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով ընթացակարգ*

5. «Հելն պրինտ» ՍՊԸ-ն ՀՀ դատախազության կարիքների համար կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 16.03.2017թ. հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

6. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 21.03.2017թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

7. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 21.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Հելն պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(16.03.2017թ.)*** երեք հաշվետու տարիների

համախառն եկամտի հանրագումարը պակաս է 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. նիստի N 3 արձանագրության համաձայն՝ «Հելն պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի 23.03.2017թ. թիվ 08/18/2169-17 և ՀՀ դատախազության 30.03.2017թ. թիվ 44/10.1/2677-17 գրությունների հիման վրա, 30.03.2017թ. թիվ 03/73-3/5667-17 և 31.03.2017թ. թիվ 03/73-3/5735-17 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Հելն պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

## 6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 67-րդ կետի համաձայն «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

***ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.***

1. ***ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգ***

«Հելն պրինտ» ՍՊԸ-ն ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 22.02.2017թ. հայտ է ներկայացրել: և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 01.03.2017թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 06.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Հելն պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(22.02.2017թ.)*** երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ***(419000 ՀՀ դրամ)*** պակաս է 7-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից ***(1485000 ՀՀ դրամ)***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2017թ. նիստի N 6 արձանագրության համաձայն՝ «Հելն պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

2 ***ՀՀ դատախազության կողմից կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով ընթացակարգ***

«Հելն պրինտ» ՍՊԸ-ն ՀՀ դատախազության կարիքների համար կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 16.03.2017թ. հայտ է ներկայացրել: և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 21.03.2017թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած

մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 21.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Հելն պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(16.03.2017թ.)*** երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ***(419000 ՀՀ դրամ)*** պակաս է 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից ***(2346000 ՀՀ դրամ)***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2017թ. նիստի N 3 արձանագրության համաձայն՝ «Հելն պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Հելն պրինտ» ՍՊԸ-ի կողմից «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» և «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում 22.02.2017թ. և 16.03.2017թ հայտերի թիվ 3.4 հավելվածներով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ***կեղծ տվյալի*** ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի **«բ»** ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Հելն պրինտ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝

մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Հելն պրինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, «Հելն պրինտ» ՍՊԸ-ն 22.02.2017թ. մասնակցելով «ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտում և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո մասնակցի կողմից 16.03.2017թ.-ին «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին մասնակցելու հայտի փաստ, որի շրջանակներում մասնակցի կողմից նույնպես թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտումներ:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ***որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

# Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2017թ. թիվ 03/73-3/5667-17 և 31.03.2017թ. թիվ 03/73-3/5735-17 գրություններով ներկայացված «Հելն պրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00159501) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Հելն պրինտ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Բողոքը քննող հանձնաժողով՝**

**նախագահ՝** **Գևորգ Հայրապետյան**

**անդամ՝** **Հասմիկ Մնացականյան**